ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 24-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2006.02.15/8(463) Հոդ.193	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	19.01.2006
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	26.01.2006
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	01.02.2006
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	25.02.2006	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
1 փետրվարի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2006 թվականի N 24-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի երրորդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետությունում հավաստագրված սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետությունում հավաստագրված սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2006 թ. հունվարի 26
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2006 թվականի
հունվարի 19-ի N 24-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում հավաստագրված սերմեր արտադրող, ներկրող ու արտահանող ֆիզիկական և իրավաբանական անձանց (այսուհետ՝ հայտատու) հաշվառման գրանցամատյանի վարման ընթացակարգը:

2. Հավաստագրված սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանը (այսուհետ՝ գրանցամատյան) Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կարգի համաձայն վարում ու պահպանում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ լիազորված մարմին):

3. Լիազորված մարմինը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի «Սերմերի հավաստագրման կարգը հաստատելու մասին» N 1479-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն սերմերի հավաստագրման մասին հայտ ներկայացնելու համար հայտատուին տրամադրում է տեղեկատվություն գրանցամատյանում հաշվառված լինելու մասին:

II. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ՈՒ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

4. Հայտատուն հաշվառվում է գրանցամատյանում և հաշվառումից հանվում է իր դիմումի հիման վրա՝ գրանցամատյանում համապատասխան գրառման կատարմամբ:

5. Դիմումն ստանալուց հետո 3-օրյա ժամկետում՝ լիազորված մարմինը հայտատուին գրավոր տեղեկացնում է՝

ա) հաշվառման մասին՝ գրության մեջ նշելով գրանցամատյանում հաշվառման համարը,

բ) հաշվառումից հանելու մասին:

6. Հայտատուն դիմումին կից ներկայացնում է՝

ա) ֆիզիկական անձինք՝ անձնագրի պատճենը,

բ) իրավաբանական անձինք՝ պետական գրանցման վկայականի պատճենը:

7. Հայտատուն գրանցամատյանում առկա տեղեկություններում փոփոխությունների կատարման դեպքում դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին:

III. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Գրանցամատյանում արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝

ա) հայտատուի հաշվառման կամ հաշվառումից հանման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը,

բ) հայտատուի անունը, հայրանունը, ազգանունը կամ անվանումը,

գ) հայտատուի բնակության կամ գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

դ) գործունեության ոլորտը,

ե) գրանցամատյանում հայտատուի հաշվառման հերթական համարը:

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Գրանցամատյանում հաշվառված հայտատուի կողմից 2 տարի անընդմեջ լիազորված մարմնին սույն կարգի 3-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրման համար պահանջ չներկայացվելու դեպքում նրա տվյալները հանվում են գրանցամատյանից:

10. Լիազորված մարմինն ստեղծում և պահպանում է գրանցամատյանի էլեկտրոնային տարբերակը:
11. Գրանցամատյանում հայտատուի հաշվառման համարն այլ հայտատուի չի տրամադրվում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2006 թվականի
հունվարի 19-ի N 24-Ն որոշման

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Հաշվառման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Հայտատուի անունը, հայրանունը, ազգանունը կամ անվանումը	Բնակության կամ գտնվելու վայրը, հեռախոսահամարը	Գործունեության ոլորտը	Հաշվառումից հանելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Ծանոթա-գրություն

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**